Արձանագրության 3
Հագուստի և անկողնային պարագաներ ձեռքբերման ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/60 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

31.05.2019թ.
ժամը՝ 10:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդիշյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյան /գնահատող/, Ռ. Ղասաբօղլյան /գնահատող/
Լ. Սաղոյան /բացող/, Ա. Սուչյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Բաղդիշյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Լույս Տորգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից չունի ժամկետանց պարտավորություն, իսկ «Տեքստիլ Հոմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը 3-րդ չափաբաժնի մասով գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը / ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը/:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի՝ «Տեքստիլ Հոմ» ՍՊԸ -ի հայտը՝ 3-րդ չափաբաժնի մասով /համաձայն Կարգի 44-րդ կետի/ և տվյալ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Լույս Տորգ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Բաղդիշյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց ծանուցել 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած զբաղեցրած մասնակցին՝ «Լույս Տորգ» ՍՊԸ-ին, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Բաղդիշյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Բաղդիշյան

Անդամներ՝ ---------- Ա. Սիմոնյան

---------- Ռ. Ղասաբօղլյան

---------- Լ. Սաղոյան

---------- Ա. Սուչյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան